Պրոֆեսիոնալիզմի եվ անվտանգ ու արդյունավետ կլինիկական գործունեության ինտեգրումը ստոմատոլոգիական կրթության մեջ

ԳԱՅԱՆԵ ՄԱՆՐԻԿՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան, ՀՀ, Երևան

Էլ հասցե՝ gana-stom@yandex.ru

DOI: 10.24234/scientific.v1i51.314

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն ուսումնամեթոդական հոդվածը ներկայացնում է Association for Dental Education in Europe-ի կողմից սահմանված առաջին (պրոֆեսիոնալիզմ) և երկրորդ (անվտանգ և արդյունավետ կլինիկական պրակտիկա) դոմենների համակարգային վերլուծությունը՝ որպես ժամանակակից ստոմատոլոգիական կրթության առանցքային հիմք: Հոդվածի նպատակն է բացահայտել նշված դոմեններում ներառված կոմպետենտությունների փոխկապակցվածությունը և դրանց կիրառելիությունը կրթական ծրագրերի նախագծման ու կատարելագործման գործընթացում: Մեթոդաբանությունը հիմնված է բովանդակային և թեմատիկ վերլուծության վրա՝ դասակարգելով ուսումնառության արդյունքները ըստ էթիկական, իրավական, կլինիկական և կառավարչական ուղղությունների: Վերլուծությունը ցույց է տալիս, որ պրոֆեսիոնալիզմի, ապացույցների վրա հիմնված մտածողության, թիմային աշխատանքի և ռիսկերի կառավարման ինտեգրումը ձևավորում է հիվանդակենտրոն, անվտանգ և հաշվետու կլինիկական պրակտիկայի մոդել: Դոմենների համակցված կիրառումը կրթական միջավայրում նպաստում է բարձր որակավորման, սոցիալապես պատասխանատու և շարունակաբար զարգացող ստոմատոլոգների պատրաստմանը՝ համահունչ եվրոպական կրթական չափանիշներին:

Բանալի բառեր՝ *ADEE, պրոֆեսիոնալիզմ, ստոմատոլոգիական կրթություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական ստոմատոլոգիական կրթության արդիականացման գործընթացում առանցքային դեր ունի Association for Dental Education in Europe-ի (ADEE) կողմից մշակված «Եվրոպացի ստոմատոլոգի պրոֆիլն ու կոմպետենտությունները» շրջանակը, որը սահմանում է մասնագիտական պատրաստվածության հստակ չափանիշներ և կրթական արդյունքներ: Այս շրջանակում առաջին դոմենը՝ պրոֆեսիոնալիզմը, և երկրորդ դոմենը՝ անվտանգ և արդյունավետ կլինիկական պրակտիկան, ձևավորում են ստոմատոլոգիական կրթության էթիկական (Ustrell-Torrent et al., 2021), իրավական, կլինիկական և կառավարչական հիմքերը՝ ապահովելով բարձր որակի, հիվանդակենտրոն և հասարակության նկատմամբ պատասխանատու խնամք (Field, Cowpe, et al., 2017; Forouzadeh et al., 2018):

Ժամանակակից առողջապահական միջավայրը պահանջում է ոչ միայն գիտական և կլինիկական հմտություններ, այլև բարձր մակարդակի էթիկական վարվելակերպ, իրավական գիտակցություն, հաշվետվողականություն և թվային պրոֆեսիոնալիզմ (Andersson et al., 2022): Առաջին դոմենում ընդգրկված էթիկայի, կարգավորման և մասնագիտական վարքագծի կոմպետենտությունները միտված են ապագա ստոմատոլոգի ձևավորմանը որպես ինքնագիտակից, պատասխանատու և սոցիալապես պարտավորված մասնագետի, ով հարգում է բուժառուի ինքնավարությունը, ապահովում է գաղտնիությունը և գործում է օրենքի ու մասնագիտական նորմերի շրջանակում:

Միևնույն ժամանակ, երկրորդ դոմենը շեշտադրում է ապացույցների վրա հիմնված որոշումների կայացումը, ռիսկերի կառավարումը, թիմային աշխատանքը և առաջնորդությունը՝ ապահովելով անվտանգ, արդյունավետ և կայուն կլինիկական պրակտիկա: Ապացույցների քննադատական գնահատումը, կլինիկական աուդիտը, որակի կառավարումը և շարունակական մասնագիտական զարգացումը դիտարկվում են որպես համակարգային բաղադրիչներ, որոնք նպաստում են բուժառուի խնամքի բարելավմանը և առողջապահական համակարգի արդյունավետությանը (Field, DeLap, et al., 2017):

Սույն ուսումնամեթոդական հոդվածի նպատակն է վերլուծել և համակարգված ներկայացնել ADEE-ի Առաջին և Երկրորդ դոմենների կոմպետենտությունները՝ ընդգծելով դրանց փոխկապակցվածությունը և կիրառելիությունը ստոմատոլոգիական կրթական ծրագրերի նախագծման, ուսումնառության արդյունքների ձևակերպման և գնահատման գործընթացում: Հոդվածը միտված է աջակցելու կրթական ծրագրերի ներդաշնակեցմանը եվրոպական չափանիշներին, ինչպես նաև նպաստելու

պրոֆեսիոնալ, անվտանգ և ապացույցների վրա հիմնված կլինիկական մտածողության ձևավորմանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն ուսումնամեթոդական աշխատանքը հիմնված է որակական վերլուծության և կրթական փաստաթղթերի համադրական ուսումնասիրության վրա: Հիմք է ընդունվել ADEE-ի կողմից սահմանված «Եվրոպացի ստոմատոլոգի պրոֆիլն ու կոմպետենտությունները» շրջանակը՝ մասնավորապես առաջին (պրոֆեսիոնալիզմ) և երկրորդ (անվտանգ և արդյունավետ կլինիկական պրակտիկա) դոմենները: Վերլուծության առարկա են հանդիսացել նշված դոմեններում ներկայացված կոմպետենտության ոլորտներն ու ուսումնառության արդյունքները (Field et al., 2025):

Մեթոդաբանական հիմքը կազմել է բովանդակային (content analysis) և թեմատիկ (thematic synthesis) վերլուծությունը: Նախ կատարվել է ուսումնառության արդյունքների դասակարգում՝ ըստ էթիկական, իրավական, կառավարչական, կլինիկական և հաղորդակցական ուղղությունների: Այնուհետև իրականացվել է դրանց ինտեգրված քարտեզագրում՝ պարզելու համար Առաջին և երկրորդ դոմենների միջև փոխկապակցվածությունները, կրկնվող կամ փոխլրացնող բաղադրիչները և կրթական շարունակականության տրամաբանությունը:

Ուսումնառության արդյունքները վերաձևակերպվել և համակարգվել են կրթական ծրագրի սկզբունքների համաձայն՝ նպատակ ունենալով ապահովել դրանց համապատասխանությունը կարողունակությունների վրա հիմնված կրթության (competency-based education) մոտեցմանը: Հատուկ ուշադրություն է դարձվել չափելիության, կիրառելիության և գնահատելիության սկզբունքներին՝ ապահովելու համար ուսումնառության արդյունքների գործնական կիրառելիությունը ծրագրի մշակման և գնահատման գործընթացում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Դոմեն I. Պրոֆեսիոնալիզմ

ADEE-ի Դոմեն I-ը ընդգրկում է ստոմատոլոգի պրոֆեսիոնալիզմի հիմքերը՝ էթիկայի կիրառում, իրավական և կարգավորող դաշտի իմացություն, հիվանդի ինքնավարության ու գաղտնիության պաշտպանություն, թվային պրոֆեսիոնալիզմ, ինչպես նաև հաշվետվողականություն և անաչառություն: Այն նաև շեշտադրում է արդյունավետ հաղորդակցությունը, հիվանդակենտրոն և բազմամասնագիտական մոտեցումը, առողջության խթանումը, ինքնավերլուծությունն ու շարունակական մասնագիտական զարգացումը՝ ապահովելով անվտանգ (Padmanabhan et al., 2024), իրավաչափ և բարձրորակ խնամք (Աղյուսակ 1) (Jarva et al., 2023; (McLoughlin et al., 2017):

Աղյուսակ 1. Պրոֆեսիոնալիզմ

ԴՈՄԵՆ Ի: Պրոֆեսիոնալիզմ	
Կոմպետենտության ոլորտ	**Ուսումնառության արդյունքներ**
1.1 ԷԹԻԿԱ	1.1.1 Կիրառել հիմնական էթիկական սկզբունքները հիվանդների խնամքի և առողջապահական հետազոտությունների ընթացքում: 1.1.2 Տարբերակել էթիկական կամ ոչ էթիկական իրավիճակները և գործել դրանց համապատասխան: 1.1.3 Կիրառել էթիկական սկզբունքները ստոմատոլոգիայի գործարարության ասպեկտներում: 1.1.4 Ցուցաբերել արժանապատիվ վերաբերմունք և հարգանք այլոց նկատմամբ՝ անկախ սոցիալական կարգավիճակից և անհատական առանձնահատկություններից (օրինակ տարիք, մշակույթ, ծագում, հնարավորություններ, հաշմանդամություն, սեռ, լեզու, կրոն, սեռական կողմնորոշում և այլն): 1.1.5 Ապահովել բուժառուի վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը, այդ թվում՝ առողջապահական միջավայրից դուրս իրավիճակներում: 1.1.6 Ցուցաբերել հարգանք հիվանդի ինքնավարության, ընտրության իրավունքի և տեղեկացված համաձայնության նկատմամբ: 1.1.7 Ցուցաբերել անաչառություն և գործել անհապաղ, եթե խնամքի տրամադրման գործընթացում առկա է վտանգի սպառնալիք որևէ մեկի համար: 1.1.8 Ցուցաբերել թվային պրոֆեսիոնալիզմ՝ պաշտպանելով բուժառուի վերաբերյալ տեղեկատվությունը՝ սոցիալական ցանցերի և թվային

	հաղորդակցության պատշաճ կիրառմամբ՝ հաշվի առնելով, թե ինչպես կարող է այդ ամենն անդրադառնալ էթիկական մարտահրավերներով լի իրավիճակներում և/կամ վնասել մասնագիտական հեղինակությունը:
1.2 ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ	1.2.1 Նկարագրել ստոմատոլոգիական գործունեության կարգավորումը, տեղական իրավական շրջանակը (երկրի կամ կազմակերպության) և ստոմատոլոգիական գործունեության հետ կապված տարբեր կանոնակարգերը՝ ներառյալ համապատասխան կարգավորող մարմնում գրանցվելու պահանջը: 1.2.2 Կիրառել համաձայնության վերաբերյալ օրենքը և ուղեցույցները բոլոր բուժառուների նկատմամբ, այդ թվում՝ երեխաների և այն մեծահասակների, ովքեր չեն կարողանում ինքնուրույն համաձայնություն տալ: 1.2.3 Նկարագրել և ապահովել ստոմատոլոգիական թիմի բոլոր անդամների գործունեության շրջանակի պահպանումը: 1.2.4 Հետևել բոլոր լրատվամիջոցներում գովազդի վերաբերյալ կանոնակարգին կամ ընդունված գործելակերպի չափանիշներին: 1.2.5 Քննարկել ընդհանուր օրենսդրության կամ կարգավորման հետևանքները և կարողանալ կիրառել դրանք այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առողջապահության և անվտանգության օրենսդրությունը, վարակների կանխարգելման և վերահսկման ընթացակարգերը, տվյալների պաշտպանությունը և իոնացնող ճառագայթման օգտագործումը:
1.3 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ	1.3.1 Արդյունավետորեն շփվել հիվանդների (ներառյալ ծնողների և խնամակալների), ստոմատոլոգիական թիմի գործընկերների, այլ

	առողջապահության մասնագետների, շահագրգիռ կողմերի և հանրության հետ 1.3.2 Ցուցաբերել բազմակողմանի մոտեցում՝ մշտապես ապահովելով բուժառուների բարձրորակ խնամք: 1.3.3 Ճանաչել առողջապահության սոցիալական հասկացությունները՝ գիտակցելով, որ հասարակության անդամների կողմից իրենց առողջության վստահումը բժշկին, արտոնություն է, և որ այս արտոնության հետ մեկտեղ ծագում են նաև պարտականություններ: 1.3.4 Ցուցաբերել հիվանդակենտրոն խնամք՝ ապահովելով, որ բուժառուների շահերը լինեն առաջին տեղում և մշտապես պաշտպանված: 1.3.5 Խրախուսել և խթանել բուժառուների ընդհանուր առողջությունը: 1.3.6 Արտահայտել բարձր ինքնագիտակցություն և բացահայտել սեփական թերությունները ՝ ինքնավերլուծության, գործընկերների կողմից քննադատական գնահատման և փորձագիտական գրախոսության միջոցով: 1.3.7 Արտահայտել հայեցակարգային դատողության հմտություններ՝ խնդիրների մասին մտածելու և հասկանալու համար, պատկերացնել,թե երբ դիմել աջակցության կամ խորհրդատվության: 1.3.8 Ընտրել և առաջնահերթություն տալ բուժման այնպիսի տարբերակների, որոնք հաշվի են առնում յուրաքանչյուր հիվանդի անհատական կարիքները, նպատակները և արժեքները, համատեղելի են ժամանակակից թերապիայի մոտեցումների հետ և համապատասխանում են մարդու իրավունքներին, բերանի խոռոչի առողջության խնամքի համապարփակ

	փիլիսոփայությանը և առողջապահության տնտեսագիտությանը: 1.3.9 Ցուցաբերել սեփական որոշումների, գործողությունների և աշխատանքի վերաբերյալ մտորելու հմտություններ և կիրառել դրանք շարունակական մասնագիտական զարգացման գործընթացում 1.3.10 Ցուցաբերել հաշվետվողականություն և գնահատել սեփական գործողություններն ու որոշումները բաց և թափանցիկ բացատրելու անհրաժեշտությունը: 1.3.11 Նկարագրել աուդիտի, կլինիկական կառավարման և փորձագիտական գնահատման գործընթացներում ներառված ընթացակարգերը:

Դոմեն II. Անվտանգ և արդյունավետ կլինիկական պրակտիկա

ADEE-ի Դոմեն II-ը վերաբերում է անվտանգ և արդյունավետ կլինիկական պրակտիկային՝ գիտական ապացույցների վրա հիմնված որոշումների ընդունմամբ, ռիսկերի և ռեսուրսների կառավարմամբ, թիմային արդյունավետ համագործակցությամբ և հիվանդակենտրոն խնամքի կազմակերպմամբ: Այն ընդգրկում է որակի վերահսկումը, իրավաչափ փաստաթղթավորումը, սուր և պլանային վիճակների կառավարումը, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը և շարունակական մասնագիտական զարգացումը՝ ապահովելով բարձրորակ և անվտանգ ստոմատոլոգիական ծառայություններ (Աղյուսակ 2) (Field, DeLap, et al., 2017; Jarva et al., 2023; (Padmanabhan et al., 2024):

Աղյուսակ 2. Անվտանգ և արդյունավետ կլինիկական պրակտիկա

ԴՈՄԵՆ II: Անվտանգ և արդյունավետ կլինիկական պրակտիկա	
Կոմպետենտության ոլորտ	**Ուսումնառության արդյունքներ**
2.1 ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՊՐԱԿՏԻԿԱ	2.1.1 Հաջողությամբ կիրառել ստոմատոլոգիայի գիտական հիմքերը՝ ներառյալ համապատասխան կենսաբժշկական գիտությունները, գիտելիքների

	ձեռքբերման մեխանիզմները, գիտական մեթոդը և ապացույցների գնահատումը: 2.1.2 Կիրառել կենսաբժշկական և կլինիկական գիտությունների ժամանակակից գիտելիքները բոլոր կլինիկական իրավիճակներում: 2.1.3 Գնահատել արտադրողների կողմից ներկայացված պնդումների վավերականությունը, հիմնականում՝ կապված արտադրանքի և տեխնիկայի ռիսկի, կլինիկական արդյունավետության և արժեքի հետ: 2.1.4 Գնահատել հրապարակված կլինիկական, գիտական և հանրային առողջապահությանն առընչվող հետազոտությունները և դրանց արդյունքում ստացված տեղեկատվությունը դիտարկել բուժառուի բերանի խոռոչի առողջության բարելավման նպատակով: 2.1.5 Նկարագրել բերանի խոռոչի առողջության պահպանման, վարքագծի փոփոխության, ռիսկի գնահատման և բերանի խոռոչի հիվանդությունների բուժման ժամանակակից մոտեցումները:
2.2 ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ	2.2.1 Ստեղծել, կառավարել և պահպանել անվտանգ աշխատանքային միջավայր: 2.2.2 Արդյունավետ կառավարել սեփական ժամանակն ու ռեսուրսները: 2.2.3 Արդյունավետորեն ինտեգրել ստոմատոլոգիական թիմի մյուս անդամներին ռիսկերի կառավարման գործընթացում, օրինակ՝, աշխատանքային դիրք, տեսողական ընկալում, սարքավորումների օգտագործում, սթրեսի և գերհոգնածության կառավարում, վարակների տարածման վերահսկողություն, վտանգավոր քիմիական նյութերի և իոնացնող ճառագայթման հետ աշխատանք: 2.2.4 Բացահայտել և արդյունավետորեն ներկայացնել մտահոգությունները՝ համապատասխանաբար տարբեր մակարդակներում՝

	դիտարկելով, որ մտահոգություններ հայտնողները պետք է պաշտպանված լինեն խտրականությունից: 2.2.5 Կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կառավարել անբարենպաստ և անցանկալի իրադարձությունները: 2.2.6 Դիտարկել փոփոխություններ՝ թիմում և ավելի լայն գործնական միջավայրում, որոնց արդյունքում զգալիորեն կբարելավվեն ռեսուրսների կիրառման արդյունավետությունն ու կայունությունը:
2.3 ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2.3.1 Արդյունավետորեն կառավարել ստոմատոլոգիական թիմի բոլոր անդամներին: 2.3.2 Նկարագրել ստոմատոլոգիական թիմի բոլոր անդամների դերը, և թե ինչպես նրանք կարող են նպաստել հիվանդակենտրոն մոտեցմանը՝ անվտանգ և արդյունավետ խնամք ապահովեու նպատակով: 2.3.3 Արդյունավետորեն պահանջել և կիսվել տեղեկատվությամբ և մասնագիտական գիտելիքներով՝ օգտագործելով բանավոր, գրավոր և էլեկտրոնային մեթոդներ: 2.3.4 Նախաձեռնել համապատասխան ուղեգրումներ՝ խնամքը արդյունավետ կազմակերպելու համար, ներառյալ չարաշահման և անտեսման վերաբերյալ մտահոգությունները: 2.3.5 Հավաքել և ճիշտ հաշվետվություն հաղորդել կլինիկական, լաբորատոր և այլ ախտորոշիչ ընթացակարգերի և թեստերի վերաբերյալ: 2.3.6 Ամենօրյա կամ անհետաձգելի իրավիճակներում անհրաժեշտության դեպքում արդյունավետորեն համագործակցել ավելի լայն բժշկական թիմի հետ: 2.3.7 Հավաքել տեղեկացված համաձայնություն՝ բուժառուներին արդյունավետորեն բացատրելով և պարզաբանելով բուժման պլանավորման ասպեկտները՝

	ներառյալ ռիսկերը, առավելությունները և բուժման արդյունքների հավանական կայունությունը: 2.3.8 Արդյունավետորեն բացատրել հիվանդներին օգտագործվող ստոմատոլոգիական նյութերի հատկությունները, դրանց կիրառման ռիսկերը և առավելությունները: 2.3.9 Հիվանդի կյանքի բոլոր փուլերում լուսաբանել բերանի խոռոչի առողջության պահպանման անհրաժեշտությունը՝ շեշտադրելով բերանի խոռոչի հիվանդությունների կանխարգելման, ռիսկերի գնահատման և բուժման ժամանակակից մոտեցումները: 2.3.10 Գնահատել և հաշվի առնել բուժառուների մտավոր, սոցիալ-հուզական և լեզվական զարգացման մակարդակը: 2.3.11 Պլանավորել այն բուժառուների բուժման արդյունավետ վարումը, որոնց կարիքները, ցանկություններն ու պահանջները կարող են ազդել ստոմատոլոգիական խնամքի պլանավորման և իրականացման ընթացքի վրա: 2.3.12 Շեշտադրել բուժառուների դերը բերանի խոռոչի հիվանդությունների կանխարգելման գործում, հնարավորության դեպքում, ստեղծելով իրազեկման անհատականացված մեթոդներ և մոտեցումներ յուրաքանչյուր բուժառուի հանդեպ: 2.3.13 Բացատրել և գնահատել առաջադեմ միջամտությունների անհրաժեշտությունը, ընտրել համապատասխան պատշաճ մեթոդ՝ ժամանակին մասնագիտացված խնամքիմիջամտության ուղեգրելու համար: 2.3.14 Գնահատել բուժման արդյունքները և մշակել հիվանդների համար արդյունավետ մոնիթորինգի և պահպանման ծրագիր՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով ստոմատոլոգիական ավելի մեծ թիմի հետ

	2.3.15 Կառավարել բերանի խոռոչի սուր վիճակները՝ ներառյալ հիվանդների ուղեգրման հետ առնչվող հարցերը և նշանակումների դեղատոմսերը: 2.3.16 Կազմակերպել հիվանդների խորհրդատվություն՝ նրանց հիվանդությունների և խանգարումների բնույթի և ծանրության վերաբերյալ՝ հիվանդին հաղորդելով բուժման արդյունքների իրատեսական ակնկալիքների և հավանական կանխատեսումների վերաբերյալ տեղեկատվություն: 2.3.17 Արդյունավետորեն համագործակցել լաբորատորիայի տեխնիկի հետ՝ համապատասխան վերականգնումներ և կառույցներ նախագծելու և նշանակելու համար: 2.3.18 Կառավարել պրոթեզների (անշարժ և շարժական) և կառույցների, այդ թվում՝ ատամնային իմպլանտների և դրանց հետ կապված բաղադրիչների որակի արդյունավետությունը: 2.3.19 Կենտրոնացնել առողջապահության և ստոմատոլոգիայի ոլորտի մասնագետներին՝ բերանի խոռոչի առողջության պահպանման ու վերականգնման հիմնական հմտությունների ուղղություններով: 2.3.20 Արտահայտել համապատասխան մասնագիտական վարքագիծ՝ ստոմատոլոգիական թիմի բոլոր անդամների և առողջապահական ոլորտի այլ մասնագետների հետ շփումներում:
2.4 ԱՈՒԴԻՏ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	2.4.1 Ստեղծել և համակարգել բուժառուների վերաբերյալ ճշգրիտ գրառումներ ՝ համաձայն իրավական պահանջների: 2.4.2 Մեկնաբանել, դասակարգել և վերլուծել ռենտգենաբանական և այլ տվյալներ 2.4.3 Արդյունավետորեն կառավարել կլինիկայում առկա վտանգները՝ ներառյալ խաչաձև վարակների վերահսկումը, վտանգավոր նյութերի օգտագործումը և իոնացնող ճառագայթման հետ աշխատանքը:

	2.4.4 Կառավարել անհատականացված սարքավորումների որակը : 2.4.5 Ժամանակին ստուգել և գնահատել ստոմատոլոգիական սարքավորումների սպասարկման անհրաժեշտությունը 2.4.6 Գնահատել հիվանդակենտրոն խնամքի հետ անմիջականորեն կապված անձանց, այդ թվում՝ հարազատների և խնամողների գոհունակությունը/դժգոհությունը 2.4.7 Ներդնել, մեկնաբանել և տարածել աուդիտի և կլինիկական կառավարման ասպեկտները
2.5 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ	2.5.1 Կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները փաստաթղթավորման, շարունակական կրթության իրականացման, հաղորդակցության, առողջապահությանը վերաբերող տեղեկատվության փոխանակման և կառավարման համար: 2.5.2 Վերանայել գիտելիքների և հմտությունների բազան (սեփականը և ավելի լայն թիմի) և ընտրել լրացուցիչ տեղեկատվություն/ուսուցում՝ բացահայտված թերությունները շտկելու համար: 2.5.3 Արդյունավետորեն գնահատել աշխատանքը (սեփականը և ավելի լայն թիմի) և ընտրել լրացուցիչ ուսուցում/աջակցություն՝ բացահայտված թերությունները շտկելու համար: 2.5.4 Ցուցադրել «կլինիկական նվաճումների արձանագրություն»՝ կիրառելով կլինիկական գործունեության արտացոլման ժամանակակից պորտֆոլիո, ինչը կարող է կիրառվել հպարտությամբ և արժեքավոր լինել, որպես ուսումնական գործիք, որը դրականորեն է ազդում սովորողների ապագա և շարունակական կլինիկական և մասնագիտական պրակտիկայի վրա:

ADEE-ի առաջին և երկրորդ դոմենների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից ստոմատոլոգիական կրթությունը պետք է դիտարկել ոչ թե առանձին գիտելիքների և հմտությունների փոխանցման, այլ համակցված կարողունակությունների ձևավորման համատեքստում: Պրոֆեսիոնալիզմը և անվտանգ կլինիկական պրակտիկան հանդես են գալիս որպես փոխկապակցված համակարգ, որտեղ էթիկական դատողությունը, իրավական գիտակցությունը և ապացույցների վրա հիմնված allորոշումների կայացումը ձևավորում են միասնական մասնագիտական ինքնություն (Andersson et al., 2022; Field, Cowpe, et al., 2017):

Առաջին դոմենի շրջանակում էթիկական սկզբունքների, կարգավորման պահանջների և մասնագիտական վարքագծի ընդգծումը կարևոր է հասարակական վստահության պահպանման տեսանկյունից: Հատկապես թվային պրոֆեսիոնալիզմի (Mohammadzadeh et al., 2024) ընդգրկումը ցույց է տալիս կրթական շրջանակի ադապտացիան ժամանակակից տեղեկատվական միջավայրին, որտեղ մասնագիտական սահմանները հաճախ ընդլայնվում են առցանց հարթակներում: Սա պահանջում է ոչ միայն տեխնիկական հմտություններ, այլև արժեքահեն մտածողություն և պատասխանատվության բարձր մակարդակ (Corrao & Argano, 2022; Field et al., 2025; McLoughlin et al., 2017):

Երկրորդ դոմենը, իր հերթին, ապահովում է, որ կլինիկական որոշումները հիմնված լինեն գիտական ապացույցների, ռիսկերի գնահատման և թիմային համագործակցության վրա: Ապացույցների քննադատական գնահատման, աուդիտի և որակի կառավարման ընդգրկումը նպաստում է համակարգային մտածողության զարգացմանը և նվազեցնում է անհատական կամ սուբյեկտիվ որոշումների ազդեցությունը (Field, DeLap, et al., 2017):

Քննարկման կարևոր եզրահանգումն այն է, որ երկու դոմենների ինտեգրումը կրթական ծրագրերում հնարավորություն է տալիս ձևավորել ոչ միայն կլինիկական հմտություններով, այլև բարձր էթիկական և առաջնորդական կարողություններով մասնագետներ: Այս մոտեցումը համահունչ է կարողունակությունների վրա հիմնված կրթության սկզբունքներին և նպաստում է հիվանդակենտրոն, անվտանգ և կայուն ստոմատոլոգիական պրակտիկայի զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ADEE-ի Առաջին և Երկրորդ դոմենների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից ստոմատոլոգիական կրթությունը պետք է կառուցվի ինտեգրված կարողունակությունների ձևավորման սկզբունքով՝ միավորելով պրոֆեսիոնալ արժեքները, իրավական պատասխանատվությունը և ապացույցների վրա հիմնված կլինիկական մտածողությունը: Պրոֆեսիոնալիզմը ապահովում է

էթիկական կայուն հիմք և հասարակական վստահություն, մինչդեռ անվտանգ և արդյունավետ կլինիկական պրակտիկան երաշխավորում է գիտականորեն հիմնավորված, ռիսկերի կառավարմամբ պայմանավորված և թիմային համագործակցության վրա հիմնված խնամք: Դոմենների համակցված կիրառումը կրթական ծրագրերում նպաստում է հիվանդակենտրոն, հաշվետու և շարունակաբար զարգացող մասնագետների ձևավորմանը՝ համահունչ եվրոպական կրթական չափանիշներին և առողջապահական համակարգի ժամանակակից պահանջներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Andersson H., Svensson A., Frank C., Rantala A., Holmberg M., & Bremer A. (2022). Ethics education to support ethical competence learning in healthcare: an integrative systematic review. *BioMed Central Medical Ethics*, *23*(1), 1–26. https://doi.org/10.1186/s12910-022-00766-z

Corrao S. & Argano C. (2022). Rethinking clinical decision-making to improve clinical reasoning. *Frontiers in Medicine*, *9*(9). https://doi.org/10.3389/fmed.2022.900543

Field J. C., Cowpe, J. G. & Walmsley,A. D. (2017). The Graduating European Dentist: A New Undergraduate Curriculum Framework. *European Journal of Dental Education*, *21*, 2–10. https://doi.org/10.1111/eje.12307

Field J. C., DeLap E. & Manzanares Cespedes M. C. (2017). The Graduating European Dentist-Domain II: Safe and Effective Clinical Practice. *European Journal of Dental Education*, *21*, 14–17. https://doi.org/10.1111/eje.12309

Field J., Vital S., Murphy, D., Dixon, J., Davies, J., Kavadella, A., Al-Haroni, M., Brady, P., Daly, B., Dolan, M., Galo, F., Grolleau, C., Kavanagh, D., Leung, A., Lyons, P., Manzanares, M.-C., Patel, U., Rederiene, G., Pavão, M., & Ponces, M. J. (2025). The Graduating European Dentist Curriculum Framework: A Multi-Stakeholder View. *European Journal of Dental Education : Official Journal of the Association for Dental Education in Europe*, *29*(4), 691–702. https://doi.org/10.1111/eje.70028

Forouzadeh M., Kiani M., & Bazmi S. (2018). Professionalism and its role in the formation of medical professional identity. *Medical Journal of the Islamic Republic of Iran*, *32*(130), 765–768. https://doi.org/10.14196/mjiri.32.130

Jarva E., Oikarinen A., Andersson J., Tomietto M., Kääriäinen M., & Mikkonen K. (2023). Healthcare professionals' digital health competence and its core factors;

development and psychometric testing of two instruments. *International Journal of Medical Informatics*, *171*, 104995. https://doi.org/10.1016/j.ijmedinf.2023.104995

McLoughlin J., Zijlstra-Shaw S., Davies J. R., & Field J. C. (2017). The Graduating European Dentist-Domain I: Professionalism. *European Journal of Dental Education*, *21*, 11–13. https://doi.org/10.1111/eje.12308

Mohammadzadeh Z., Shokri M., Saeidnia H. R., Kozak M., Marengo A., Lund B. D., Ausloos, M., & Ghiasi, N. (2024). Principles of digital professionalism for the metaverse in healthcare. *BMC Medical Informatics and Decision Making*, *24*(1). https://doi.org/10.1186/s12911-024-02607-y

Padmanabhan, V., Islam, M. S., Rahman, M. M., Chaitanya, N. C., & Sivan, P. P. (2024). Understanding patient safety in dentistry: evaluating the present and envisioning the future—a narrative review. *BMJ Open Quality*, *13*(Suppl 2), e002502. https://doi.org/10.1136/bmjoq-2023-002502

Ustrell-Torrent J., Buxarrais-Estrada M. & Riutord-Sbert P. (2021). Ethical relationship in the dentist-patient interaction. *Journal of Clinical and Experimental Dentistry*, *13*(1), e61–e66. https://doi.org/10.4317/jced.57597

РЕЗЮМЕ

ИНТЕГРАЦИЯ ПРОФЕССИОНАЛИЗМА, БЕЗОПАСНОЙ И ЭФФЕКТИВНОЙ КЛИНИЧЕСКОЙ ПРАКТИКИ В СТОМАТОЛОГИЧЕСКОЕ ОБРАЗОВАНИЕ

Гаяне Манрикян

В данной учебно-методической статье представлен систематический анализ Первой (Профессионализм) и Второй (Безопасная и эффективная клиническая практика) сферы определенной, Ассоциацией Стоматологического Образования в Европе как основа современного стоматологического образования. Цель статьи — выявить взаимосвязи компетенций, включенных в указанные области, и их применимость в процессе разработки и совершенствования образовательных программ. Методология основана на контентном и тематическом анализе, классифицирующем результаты обучения по этическим, правовым, клиническим и управленческим направлениям. Анализ показывает, что интеграция профессионализма, доказательного мышления, командной работы и управления рисками формирует модель пациентоориентированной, безопасной и ответственной клинической практики. Совместное использование этих областей в образовательной среде способствует подготовке высококвалифицированных, социально ответственных и постоянно развивающихся стоматологов в соответствии с европейскими стандартами образования.

Ключевые слова: *ADEE, профессионализм, стоматологическое образование.*

SUMMARY

Integrating professionalism, safe and effective clinical practice into dental education

Gayane Manrikyan

This educational-methodological article presents a systematic analysis of the First (Professionalism) and Second (Safe and Effective Clinical Practice) domains defined by the Association for Dental Education in Europe as the key foundation of modern dental education.

The aim of the article is to reveal the interrelationship of the competencies included in the mentioned domains and their applicability in the process of designing and improving educational programs. The methodology is based on content and thematic analysis, classifying learning outcomes according to ethical, legal, clinical and managerial directions. The analysis shows that the integration of professionalism, evidence-based thinking,

teamwork and risk management forms a model of patient-oriented, safe and responsible clinical practice. The combined use of current domains in the educational environment contributes to the preparation of highly qualified, socially responsible and continuously developing dentists in accordance with European educational standards.

Keywords: *ADEE, professionalism, dental education.*

Հոդվածը ստացվել է՝ 09.03. 2026
Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 12.03. 2026
Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 19.04.2026